ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԿԵՂԾՎԱԾ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

հատուկ նշանակություն տալով բնակչության համար անհրաժեշտ ծավալներով եւ տեսականիով՝ արդյունավետ, անվտանգ եւ որակյալ դեղամիջոցների ապահովմանը,

գիտակցելով, որ կեղծված դեղամիջոցների շրջանառությունը լուրջ վտանգ է ներկայացնում Կողմերի պետությունների բնակչության առողջության եւ բարեկեցության համար,

հաշվի առնելով Կողմերի պետություններում կեղծված դեղամիջոցների շրջանառության, այդ թվում՝ ներմուծման ու արտահանման կանխման, բացահայտման եւ խափանման համար անհետաձգելի միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը,

ընդունելով Կողմերի պետություններում դեղամիջոցների շրջանառությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման նպատակահարմարությունը,

հիմնվելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ կեղծված դեղամիջոցների շրջանառության դեմ պայքարին վերաբերող հանձնարարականների վրա,

ղեկավարվելով միջազգային իրավունքի համընդհանուր նորմերով, միջազգային պայմանագրերով, Կողմերի պետությունների օրենսդրությամբ,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի առարկան կեղծված դեղամիջոցների շրջանառության դեմ պայքարում Կողմերի համագործակցությունն է:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Համաձայնագրի շրջանակներում կեղծված դեղամիջոցների շրջանառության, այդ թվում՝ դրանց ներմուծման եւ արտահանման դեմ պայքարի հարցերով Կողմերի համագործակցությունն իրականացվում է հետեւյալ հիմնական ուղղություններով.

կեղծված դեղամիջոցների շրջանառության դեմ պայքարի ուղղությամբ համաձայնեցված միջոցառումների անցկացում, այդ թվում՝ վերահսկվող մատակարարումների ժամանակ,

դեղամիջոցների շրջանառությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ներդաշնակեցում՝ միջազգային ստանդարտներին, այդ թվում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հանձնարարականներին համապատասխան,

տեղափոխման եւ իրացման ժամանակ կեղծված դեղամիջոցները թաքցնելու եւ քողարկելու համար կիրառվող միջոցների, ինչպես նաեւ դրանց բացահայտման մեթոդների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,

տեղեկատվական փոխգործակցություն, Կողմերի պետությունների օրենսդրական եւ այլ նորմատիվ իրավական ակտերի փոխանակում,

դեղամիջոցների որակի վերահսկման եւ կեղծված դեղամիջոցների հայտնաբերման ուղղությամբ մեթոդական հանձնարարականների մշակում,

դեղամիջոցների որակի վերահսկման եւ կեղծված դեղամիջոցների շրջանառության դեմ պայքարի բնագավառում աշխատելու համար կադրերի պատրաստման եւ վերապատրաստման ուղղությամբ մեթոդական ծրագրերի մշակում,

կեղծված դեղամիջոցների շրջանառության դեմ պայքարի հետ կապված հարցերում փոխադարձ գիտատեխնիկական եւ խորհրդատվական օգնության ցուցաբերում,

կեղծված դեղամիջոցների շրջանառության կանխմանն ուղղված արդիական պաշտպանության տեխնոլոգիաների, այդ թվում՝ դեղամիջոցների պաշտպանական պիտակավորման եւ դրանց կիրառման մեթոդների ներդրմանն աջակցություն,

կեղծված դեղամիջոցների շրջանառության դեմ պայքարին վերաբերող արդիական հարցերի շուրջ գիտագործնական կոնֆերանսների, սեմինարների եւ գիտաժողովների անցկացում:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը պարտավորվում են միմյանց տեղեկացնել կեղծված դեղամիջոցների հայտնաբերման եւ տարածման փաստերի, դեղամիջոցների պաշտպանման եւ դրանց իսկությունը հաստատելու մեթոդների մասին:

ՀՈԴՎԱԾ 4

Կեղծված դեղամիջոցները ենթակա են ոչնչացման այն Կողմի պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում դրանք բացահայտվել են եւ/կամ գտնվում են:

Կեղծված դեղամիջոցների ոչնչացման փաստերի վերաբերյալ Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է տեղեկացնել մյուս Կողմերին, կեղծված դեղամիջոցի վրա նշված արտադրողին, ինչպես նաեւ այն պետությանը, որի տարածքից այդ դեղամիջոցը ներկրվել է:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում Կողմերը որոշում են դրա իրագործման համար պատասխանատու իրավասու մարմինները եւ այդ մասին տեղեկացնում են ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերն ինքնուրույն են կրում սույն Համաձայնագրի կատարման ընթացքում առաջացող ծախսերն այն ֆինանսական միջոցների շրջանակներում, որոնք ամեն տարի ազգային բյուջեներում նախատեսվում են, որպեսզի տրամադրվեն իրավասու նախարարություններին եւ գերատեսչություններին նրանց գործառույթների կատարման համար, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի համաձայնեցվում:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակից են Կողմերի պետությունները:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման եւ մեկնաբանման ժամանակ ծագող բոլոր վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ՝ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, իսկ այն պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարում՝ վերոնշյալ ընթացակարգերի կատարման մասին փաստաթղթերն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 10

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ իր մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին դուրս գալու ենթադրվող ամսաթվից առնվազն 6 ամիս առաջ, կարգավորելով սույն Համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունները:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը բաց է դրա նպատակներն ու սկզբունքներն ընդունող այլ պետությունների միանալու համար այդ միանալու մասին փաստաթղթերն ավանդապահին փոխանցելու միջոցով: Միացող պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի ստանալու օրվանից:

Կատարված է Քիշնեւ քաղաքում 2008 թվականի նոյեմբերի 14-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա վավերացված պատճենը:

Սույն Համաձայնագիրն ստորագրվել է Ադրբեջանի Հանրապետության Կառավարության (վերապահումով), Հայաստանի Հանրապետության Կառավարության, Բելառուսի Հանրապետության Կառավարության, Ղազախստանի Հանրապետության Կառավարության, Ղրղզստանի Հանրապետության Կառավարության, Մոլդովայի Հանրապետության Կառավարության (վերապահումով), Ռուսաստանի Դաշնության Կառավարության, Տաջիկստանի Հանրապետության Կառավարության, ՈՒզբեկստանի Հանրապետության Կառավարության եւ ՈՒկրաինայի Կառավարության կողմից:

Հայաստանի Հանրապետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 14.12.2009 թ.:

Ադրբեջանի Հանրապետության վերապահումը

Բացառությամբ 2-րդ հոդվածի երրորդ պարբերության:

Ադրբեջանի Հանրապետության վարչապետ՝ Ա. Ռասի-զադե

Մոլդովայի Հանրապետության վերապահումը

Մոլդովայի Հանրապետությունը մասնակցելու է Համաձայնագրի դրույթների իրագործմանն այնքանով, որքանով դրանք չեն հակասում ազգային օրենսդրության պահանջներին եւ տվյալ ոլորտում Մոլդովայի Հանրապետության միջազգային պարտավորություններին:

Մոլդովայի Հանրապետության համար Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ներպետական ընթացակարգերի կատարումից հետո:

Մոլդովայի Հանրապետության վարչապետ՝ Զ. Գրեչանի